

1. Յուպիտերի զանգվածը կարելի է որոշել իր արբանյակներից որևէ մեկի դիտումներից: Ջանգվածը որոշելու համար n° մեծությունն է անհրաժեշտ որոշել այդ դիտումներից.

- 1) արբանյակի զանգվածը
- 2) արբանյակի ուղեծրի էքսցենտրիսիտետը
- 3) արբանյակի ուղեծրային պտույտի պարբերությունը
- 4) արբանյակի ուղեծրի թեքվածությունը

2. Հին Հունաստանի աստղագետներից n° ստեղծեց Եվրոպայում հայտնի առաջին աստղային կատալոգը.

- 1) Հիպարքոսը
- 2) Արիստարք Սամոսացին
- 3) Պտղոմեոսը
- 4) Էրատոսթենեսը

3. Նշված մոլորակներից n° ըն է հանդիսանում երկրանման և արտաքին մոլորակ.

- 1) Սատուրն
- 2) Մարս
- 3) Վեներա
- 4) Յուպիտեր

4. Երկրից դիտողի համար Մարսի պայծառությունը դիմակայության ժամանակ քանի անգամ է տարբերվում նույն պայծառությունից միացման ժամանակ:

- 1) 4.8
- 2) 23
- 3) 0.2
- 4) 1.52

5. Աստերոիդի շառավիղ-վեկտորը 25 շաբաթվա ընթացքում գծում է իր ուղեծրով պարփակված մակերեսի 0.1 մասը: Որքա՞ն է նրա պտտման պարբերությունը:

- 1) 29 տարի
- 2) 2.9 տարի
- 3) տվյալները բավարար չեն
- 4) 4.8 տարի

6. Ո՞րն է ջրածնի գծերի բալմերյան շարքի սահմանը, եթե լայմանյան շարքի համար այն հավասար է մոտավորապես 912 անգստրեմի.

- 1) 6563A
- 2) 1216A
- 3) 3648A
- 4) 1824A

7. Որքա՞ն կարող է լինել բաց աստղակույտերում աստղերի քանակությունը:

- 1) 10^3
- 2) 10^9
- 3) 10^{10}
- 4) 10^6

8. Աստղի ճառագայթման մաքսիմումը գտնվում է 4000 անգստրեմ ալիքի երկարության վրա: Որքա՞ն է աստղի էֆեկտիվ ջերմաստիճանը.

- 1) 5000 Կ
- 2) 7500Կ
- 3) 40000Կ
- 4) 10000Կ

9. Նշված սպեկտրալ դասերի աստղերից որո՞նց ջերմաստիճանն է ամենաբարձրը.

- 1) F
- 2) A
- 3) K
- 4) O

10. Որքա՞ն է Երկրի առանցքի պրեցեսիայի անկյունային արագությունը`

- 1) 5' տարի⁻¹
- 2) 0.5° տարի⁻¹
- 3) 50'' տարի⁻¹
- 4) 25' տարի⁻¹

